ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1963 Общественные науки

Գ. Դեղամյան

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ԷՏԱՊԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՇԱՎԱԼՈՒՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻՄ

ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան (1953 թ.) պլենումը շրջադարձային կետ հանդիսացավ սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման պատմության մեջ։ Անհատի պաշտամունքի երկարատև տիրապետությունից հետո, առաջին անգամ համարձակորեն առաջ քաշելով գյուղատնտեսության ետ մնալու հարցերը, պլենումը ցույց տվեց, որ բացահայտ անհամապատասխանություն է առաջացել սոցիալիստական արդյունաբերության աճի տեմպերի և գյուղատնտեսական արտադրության մակարդակի միջև։ Եթե 1940--1952 թթ. արդյունաբերության համախառն արտադրանքն աճել էր 2—3 անգամ, ապա գյուղատնտեսության համախառն արտադրանքն աճել էր միայն 10%-ով։ Դա հղի էր վտանգավոր հետևանքներով և կարող էր արգելակել սոցիալիստական էկոնոմիկայի հետագա վերելքին։

Պլենումին տված զեկուցման մեջ, Ն. Ս. Խրուշչովը բացահայտեց գյուղատնտեսության ետ մնալու օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի այն հանճարեղ ցուցումով, որ «սոցիալիզմի միակ նյութական հիմքը կարող է լինել խոշոր, մեքենայական արդյունաբերությունը, որն ընդունակ է վերակառուցելու նաև հողագործությունը»[1], պարտիան Հոկտեմբերյան ռևոլյուցիայից անմիջապես հետո հարկադրված էր մոբիլիզացնելու բոլոր ներքին ռեզերվները, բոլոր միջոցները արագ տեմպերով երկիրը ինդուստրացնելու համար։ Ինդուստրացման տեմպերից էր կախված թե՛ ամբողջ էկոնոմիկայի հետագա զարգացումը և թե՛ սոցիալիզմի նվաճումների պաշտպանությունը։ Պարզ է, որ նման պայմաններում սովետական կառավարությունը հնարավորություն չուներ անհրաժեշտ հատկացումներ կատարելու գյուղատնտեսության զարգացման համար։ Ավելին։ Այնպիսի գյուղատնտեսական երկրում, ինչպիսին ՍՍՌՄ-ն էր, որտեղ ինդուստրացման նախօրյակին ազգաբնակչության 4/5-ը զբաղվում էր երկրագործությամբ, առանց գյուղացիության ակտիվ մասնակցության հնարավոր չէր ինդուստրացման համար միջոցների անհրաժեշտ կուտակումներ կատարել։ Եվ այդպես էլ եղավ։

Ինչպես ցույց տվեց ՍՄԿՊ Սեպտեմբերյան պլենումը, հիմնական միջոցները երկրի ավերված տնտեսությունը վերականգնելու և ինդուստրացման մեջ ներդնելու պարտիայի քաղաքականությունը շարունակվեց մինչև ետպատերազմյան՝ չորրորդ հնգամյակի պլանների կատարումը, որից հետո, օբյեկտիվորեն նախադրյալներ ստեղծվեցին գյուղատնտեսությանը հատկացվող միջոցների ավելացման համար։

---

1 Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հ. 32, էջ 591։

«Մենք հնարավորություն չունենք,—արձանագրում է ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումը,—ապահովելու թե՛ ծանր ինդուստրիայի, թե՛ գյուղատնտեսության, թե՛ թեթև արդյունաբերության միաժամանակ զարգացումը բարձր տեմպերով։ Դրա համար հարկավոր էր ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ»[2]։

ՍՄԿՊ Սեպտեմբերյան պլենումի արժանիքը կայանում է նրանում, որ ժամանակին նկատելով մեր երկրի էկոնոմիկայի զարգացման ընթացքում կատարվող տեղաշարժերը, մշակեց նոր միջոցառումներ, որով արդյունաբերության և գյուղատնտեսության միջև նյութական միջոցներն այնպես վերաբաշխվեցին, որպեսզի պահպանելով արդյունաբերության զարգացման առաջատար տեմպերը, միաժամանակ ապահովվի գյուղատնտեսության արագ վերելքը։ Այդ նպատակով ավելացվեցին կապիտալ ներդրումները գյուղատնտեսության մեջ։ Այսպես, եթե 1921—1953 թթ. Հայկական ՍՍՌ-ի գյուղատնտեսության մեջ պետության կողմից ներդրվել էր 254 միլիոն ռուբլի, ապա միայն 1954—1959 թթ. ներդրվեց 163 միլիոն ռուբլի[3]։

Սոցիալիստական գյուղատնտեսության ետ մնալու օբյեկտիվ պատճառներից էր նաև Հայրենական պատերազմը, որը հսկայական նյութական վնասներ հասցրեց և առնվազը 2 հնգամյակով ետ գցեց մեր տնտեսության խաղաղ զարգացումը։

Այսպիսով, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման տեմպերի անհամաչափությունը օբյեկտիվորեն բխում է համաշխարհային պատերազմների և քաղաքացիական կռիվների հետևանքով ավերված մեկ, առանձին երկրում սոցիալիզմի կառուցման դժվարություններից։

ՍՄԿՊ Սեպտեմբերյան պլենումը գյուղատնտեսության ետ մնալու օբյեկտիվ պատճառներից բացի, բացահայտեց նաև մի շարք սուբյեկտիվ պաաճառներ։

«Բայց կան գյուղատնտեսության մի շարք կարևոր ճյուղերի ետ մնալու այլ պատճառներ ևս—նշվեց պլենումի որոշման մեջ,—պաաճառներ, որոնց արմատները գտնվում են մեր աշխատանքի թերությունների մեջ, գյուղատնտեսության ղեկավարման թերությունների մեջ, այսինքն պատճառներ, որոնք կախված են հենց մեզնից»[4]։

Այդ պատճառներից են, ամենից առաջ, գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման մեջ կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության խախտումը, պլանավորման սխալները, հասարակական և անձնական շահերի ճիշտ զուգակցման անտեսումը, ներկոլտնտեսային դեմոկրատիայի ոտնահարումը և այլն։

Խոսելով գյուղատնտեսության հետ մնալու սուբյեկտիվ պաաճառների մասին, 1957 թ. մայիսին, արվեստի աշխատողների խորհրդակցությունում Ն. Ս. Խրուշչովը ասել է. «Այդ տեղի էր ունենում այն պատճառով, որ կենտրոնում ոչ մեկը չէր ուզում ինչպես հարկն է խորամուխ լինել գործի դրության մեջ։ Ստալինը, ինչպես հայտնի է, ոչ մի տեղ չէր գնում, գյուղատնտեսության աշխատողների հետ չէր խորհրդակցում, չէր լսում տեղի աշխատավորների ձայնը, իսկ մարդիկ, որոնց նա կենտրոնում հանձնարարում էր հետևել գյու-

2 «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և պլենումների բանաձևերում ու որոշումներում», Երևան, 1955, 3-րդ մաս, էջ 774։

3 «Советская Армения за 40 лет», стат. сборник, Ереван, 1961, стр. 141—142.

4 «ՍՄԿՊ-ն բանաձևերում», 3-րդ մաս, էջ 774։

զատնտեսությանը, նրանից թաքցնում էին բոլոր թերությունները, զբաղվում էին աչքակապությամբ»[5]։

Անհատի պաշտամունքի հետևանքով տեղերում իշխող ղեկավարության կոպիտ վարչարարությունը միահյուսվում էր ցուցամոլական զեկուցագրերի և ողջույնի հեռագրերի մեջ արտահայտած պարադային տրամագրությունների հետ, որը կաշկանդում էր աշխատանքի արդյունքների քննադատական վերլուծությունը, թերությունների բացահայտումն ու վերացումը։ ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումի կողմից բացահայտված, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները տարիներ շարունակ խոչընդոտում էին մեր էկոնոմիկայի վերելքին։ Բայց անհրաժեշտ է տարբերել այդ պատճառների ազդեցության տարբեր շրջանակները։ Եթե մինչև ետպատերազմյան հնգամյակի կատարումը, գյուղատնտեսության զարգացման տեմպերի ետ մնալը հիմնականում պայմանավորված էր օբյեկտիվ պայմանների բացակայությամբ, ապա 50-ական թվականներին վճռականը սուբյեկտիվ պատճառներն էին՝ ղեկավարության արատավոր, դոգմատիկ մեթոդները։

Սեպտեմբերյան պլենումը ոչ միայն վերլուծեց և բացահայտեց թերություններն ու սխալները ծնող պատճառները, այլև մշակեց կոնկրետ միջոցառումներ դրանք վերացնելու համար։

Հետագայում ՍՄԿՊ պլենումներում և համագումարներում էլ ավելի խոր և բազմակողմանի մշակվեցին մեր երկրի էկոնոմիկայի զարգացման հարցերը, հատկապես գյուղատնտեսական արտադրության բարձրացման հարցերը, որոնցից կախված էին կոմունիստական շինարարության հաջողությունները։

Սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի համար ՍՄԿՊ ձեռնարկած միջոցառումներից ամենակարևորը աշխատավորների նյութական շահագրգռվածության սկզբունքի կիրառումն էր։ Պետության և կոլտնտեսությունների փոխհարաբերությունների հիմքում դնելով ապրանքա-դրամային հարաբերությունները, Սեպտեմբերյան պլենումից հետո սահմանվեցին գյուղատնտեսության մթերքների մթերումների և պետական գնումների նոր կարգ, մշակվեցին նոր գներ, որոնք արդեն արտադրական ծախսերը փոխհատուցելուց բացի որոշ կուտակումների հնարավորություն էին տալիս, առանց որի կոլտնտեսություններն ի վիճակի չեն իրագործելու ընդլայնված վերարտադրությունը։ Սեպտեմբերյան պլենումի որոշմամբ, անասունների և թռչունների մթերման գները բարձրացվեցին 5,5 անգամ, կաթինը և յուղինը՝ 2 անգամ, կարտոֆիլինը՝ 2,5 անգամ և այլն։ Արմատապես փոփոխվեց մթերումների սիստեմը։ Վերականգնվեց պատերազմից առաջ ընդունած (ՀամԿ(բ)Պ 1940 թ. Մարտյան պլենումի) և պատերազմի հետևանքով չկենսագործված մթերումների հեկտարային սկզբունքը։ Ելնելով գյուղատնտեսական արտադրության բարձրացումից ՍՄԿՊ 1958 թ. Հունիսյան պլենումը վերացրեց մթերումների բազմազանությունը և մտցրեց մեկ միասնական ձև՝ պետական գնումներ։ Աշխատավորության նյութական շահագրգռվածության բարձրացման խնդրում կարևոր նշանակություն ունեցավ նաև վարձատրության կարգավորումը, ամենամսյա երաշխավորված վարձատրության և դրամական վարձատրության

---

5 Խրուշչով. Ժողովրդի կյանքի հետ գրականության և արվեստի սերտ կապի մասին, Երևան, 1957, էջ 6։

պրոգրեսիվ ձևերին անցնելը, որոնք խթանեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։

ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումը հատուկ ուշադրություն դարձրեց նաև գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի ամրապնդման վրա։ Փաստորեն գյուղատնտեսության համար նոր որակի բազա ստեղծվեց և առաջնակարգ տեխնիկան ավելի ռացիոնալ օգտագործելու համար 1958 թ. արմատապես փոփոխվեց մեքենայական սպասարկման կարգը. ՄՏԿ-ների գյուղատնտեսական մեքենաները վաճառվեցին կոլտնտեսություններին։ ՄՏԿ-ների վերակառուցումը և տեխնիկան կոլտնտեսություններին վաճառելը ոչ միայն պրակտիկ, այլև թեորիական խոշոր նշանակություն ունեցավ։

Ինչպես տեսնում ենք, Սեպտեմբերյան պլենումով նշանավորվեց սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման նոր էտապը, որի խնդիրները կոնկրետացվեցին ու զարգացվեցին պարտիայի ու կառավարության հետագա միջոցառումներով։ ՍՄԿՊ ԿԿ Դեկտեմբերյան (1958 թ.) պլենումը, գնահատելով անցած հինգ տարիների նշանակությունը, արձանագրեց. «ՍՄԿՊ ԿԿ պլենումը գտնում է, որ ՍՄԿՊ Սեպտեմբերյան պլենումից հետո անցած ժամանակաշրջանը պարտիայի ու երկրի կյանքում, մեր ժողովրդի կյանքում պատմական նշանակություն ունի։ Այդ ժամանակաշրջանում Կոմունիստական պարտիան մշակեց և կենսագործեց գյուղատնտեսության բոլոր ճյուղերի շեշտակի վերելքի կարևորագույն միջոցառումները, որոնք նոր էտապ նշանավորեցին կոլտնտեսային կարգերի և մեր ամբողջ սոցիալիստական սիստեմի զարգացման ու ամրապնդման ասպարեզում»[6]։

Հրապարակի վրա եղած գրականության մեջ, հատկապես Սովետական Հայաստանի 40-ամյակի կապակցությամբ հրատարակված տնտեսագիտական մի շարք աշխատությունների մեջ, անհրաժեշտ լուսաբանության չեն արժանացել գյուղատնտեսության զարգացման նոր էտապի որակական առանձնահատկությունները։ Լավագույն դեպքում ՍՄԿՊ Ետսեպտեմբերյան շրջանի ձեռնարկած միջոցառումները դիտվում են որպես նախորդ շրջանի էվոլյուցիոն զարգացման շարունակություն, որով կամա թե ակամա թերագնահատվում է նոր էտապի նշանակությունը։

Հարցը ոչ միայն նրանում է, որ բարձրացվել են գյուղատնտեսական մթերքների մթերումների նախասեպտեմբերյան շրջանի կամայականորեն սահմանված գները, այլ նրա մեջ, որ պետության և կոլտնտեսությունների փոխհարաբերությունների հիմքում դնելով ապրանքա-դրամային հարաբերությունները, սահմանվեցին նոր գներ, որոնք կարևոր խթան հանդիսացան գյուղատնտեսության վերելքի համար։ «Գների պրոբլեմի մեջ,—գրված է պարտիական փաստաթղթերից մեկում,—խաչաձևվում են սովետական պետության բոլոր հիմնական, իսկ հետևաբար նաև քաղաքական պրոբլեմները»[7]։ Այդ իսկ պատճառով Սովետական կառավարությունը տարեցտարի կատարելագործում է գյուղատնտեսական մթերքների մթերումների գները։

1952—57 թթ. Հայկական ՍՍՌ-ում հացահատիկի մթերման գները բարձրացվեցին 2 անգամ, կարտոֆիլինը՝ 5,3 անգամ, շաքարի ճակնդեղինը՝ 1,7

---

[6] «КПСС в резолюциях», ч. IV, М., 1960, стр. 357—358.

[7] «ՍՄԿՊ-ն բանաձևերում», մաս 2-րդ, 1955, էջ 436։

անգամ, ծխախոտինը՝ 2 անգամ, կաթինը՝ 3,4 անգամ, բրդինը՝ 3,1 անգամ և այլն։

Արմատապես վերափոխվեց գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազան։ Նոր էտապում ոչ միայն վերականգնվեց գյուղատնտեսության մաշված մեքենական պարկը, կամ ավելացվեց մեքենաների քանակը, այլ ելնելով կոմունիստական հասարակարգի կառուցման խնդիրներից, միանգամայն նոր որակի տեխնիկական բազա ստեղծվեց գյուղատնտեսության համար։ Եթե մինչև 1953 թ. թողարկվում էին 164 տեսակի տրակտորներ, որոնց մեծ մասը արտադրության մեջ չէին արդարացնում իրենց, ապա 1959 թ. արտադրվեցին ավելի քան 400 տեսակի տրակտորներ։ Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման նոր էտապի ձեռնարկված միջոցառումների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Գյուղատնտեսության պլանավորման պրակտիկայի փոփոխման մասին» ՍՄԿՊ 1955 թ. մարտի 9-ի որոշումը, որով պահանջվում էր վերջ տալ կենտրոնացված, առանց տեղական առանձնահատկությունները հաշվի առնելու պլաններ կազմելուն և մոբիլիզացնել աշխատավորներին արտադրության ավելացման, ռեզերվների լավագույն օգտագործման համար մղվող պայքարում։

ՍՄԿՊ Կենտկոմի արմատական միջոցառումների շնորհիվ, որոնց սկիզբը դրվեց 1953 թ. Սեպտեմբերյան պլենումում, մեր երկրի գյուղատնտեսությունը դուրս եկավ փակուղուց և խոշոր նվաճումների հասավ։

Այդ պայքարում իր ավանդը մուծեց նաև Սովետական Հայաստանի աշխատավորությունը, որի 1954—58 թթ. քրտնաջան աշխատանքը շատ բարձր գնահատվեց ՍՍՌՄ Գերագույն Սովետի կողմից. պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Հետաքրքիր է ռեսպուբլիկայի ցանքատարածությունների փոփոխման դինամիկան։ 1928 թ. մինչև 1950 թ. այն դանդաղորեն, տարեցտարի աճելով 332 հազար հեկտարից հասել էր 471 հազար հեկտարի։ Իսկ 1950—53 թթ. տարվելով ռեսպուբլիկան սեփական հացով ապահովելու մասին միութենական կառավարության 1950 թ. մայիսի 30-ի չհիմնավորված ու սխալ որոշմամբ, մոտ 80 հազար հեկտարով ավելացվեց հացահատիկի տակ դրվող հողատարածությունը։ Դրանով իսկ ռեսպուբլիկայի ցանքատարածությունները հասան ռեկորդային թվի՝ 517 հազար հեկտարի։ Այդ սխալ որոշման հետևանքով, ռեսպուբլիկայում ծովի մակերևույթից 2000—2500 մ բարձրության վրա՝ Թալինի, Կամոյի, Ղուկասյանի, Սիսիանի և այլ շրջանների լավագույն արոտավայրերն ու մարգագետինները հերկվեցին և հացահատիկ ցանվեցին, որտեղ հեկտարից 2—3 ցենտներ բերք էր ստացվում։ Այդ նոր «յուրացված» հողատարածությունների մեծ մասը բարձր թեքություն ունենալով 2—3 տարվա ընթացքում քայքայվեց և ոչ պիտանի դարձավ գյուղատնտեսական արտադրության համար։ Դա խոշոր վնաս հասցրեց ոչ միայն հացահատիկի արտադրության ավելացմանը, այլև անասնաբուծության հետագա զարգացմանը, զրկելով նրան լավագույն արոտավայրերից։ Այդ իսկ պատճառով արդեն 1953—1958 թվականներին ռեսպուբլիկայի ցանքատարածությունները ոչ միայն չավելացան, այլ շեշտակի կերպով նվազեցին՝ 517 հազար հեկտարից հասնելով 413 հազար հեկտարի։ Եվ միայն 1958 թ. հետո նորից սկսում է ավելանալ, այն

8 ՍՄԿՊ կից ՄԼԻ Հայկ. ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 124, թ. 82։

անգամ արդեն հիմնականում ոռոգման միջոցով՝ նոր յուրացվող հողերի հաշվին, որը, որպես կանոն, դրվում է այգեգործության տակ։ 1953—58 թվականներին նվազել է նաև տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունը՝ 34,5 հազար հեկտարից հասնելով 28,3 հազար հեկտարի։ Ռեսպուբլիկայում անընդհատ աճել է կերային կուլտուրաների ցանքային տարածությունը՝ 1958 թ. հասնելով ավելի քան 100 հազար հեկտարի, կամ ընդհանուր ցանքատարածությունների մեկ քառորդին։ Կերային կուլտուրաների հարցում խոշոր փոփոխություն է տեղի ունեցել նրանց կառուցվածքի մեջ։ 1945 թ. ռեսպուբլիկայում ցանվել էր ընդամենը 33 հազար հեկտար անասնակեր։ Բայց, տարվելով Վիլյամսի ուսմունքի շաբլոն կիրառմամբ, տարեցտարի պլանավորվում էր բազմամյա խոտաբույսերի ցանքի ավելացում, որի պատճառով 1953 թ. այն հասավ 89,7 հազար հեկտարի (աճեց մոտ 3 անգամ)։ Միայն ՍՄԿՊ Սեպտեմբերյան և հաջորդ պլենումների միջոցառումների շնորհիվ կրճատվեցին բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունները, դրա փոխարեն մշակվեցին միամյա խոտաբույսեր և սիլոսային կուլտուրաներ[9]։

Հացահատիկի արտադրության բնագավառում ռեսպուբլիկայի գյուղատնտեսության աշխատավորները մեծ հաջողությունների հասան. 1953 թ. հեկտարից 7,1 ցենտներ բերքի փոխարեն 1958 թվականի անբարենպաստ տարում, միջին հաշվով հեկտարից 9,5 ցենտներ բերք ստացվեց։ Բարձր արդյունքի հասան հատկապես Էջմիածնի, Շահումյանի, Հոկտեմբերյանի, Վեդու, Բասարգեչարի, Կալինինոյի շրջանները։ Հոկտեմբերյանում, օրինակ, 1958 թվականին մեկ հեկտարից ստացվեց 25,8 ցենտներ միջին բերք, իսկ Բասարգեչարում՝ 20—21 ցենտներ[10]։ Բերքատվության բարձրացման շնորհիվ (չնայած հացահատիկի ցանքատարածությունները կրճատվեցին $^1/_3$-ով) նույն ժամանակաշրջանում հացահատիկի համախառն բերքը մնաց համարյա նույն մակարդակի վրա[11]։

Հայաստանի բամբակագործները Կրեմլում ստանձնած իրենց պարտավորություններում խոստացել էին 1958 թ. երկրին տալ 32 հազար տոննա հումք, բայց քրտնաջան աշխատանքի շնորհիվ պետությանը վաճառեցին 35,9 հազար տոննա, գերազանցելով նույնիսկ 1965 թվականի համար նախատեսված պլանը։ 1953 թ. մեկ հեկտարից 20,8 ցենտների փոխարեն, 1958 թ. ստացվեց 25,3 ցենտներ բերք։ Հատկապես բարձր ցուցանիշների հասան Արտաշատի բամբակագործները, որոնք մեկ հեկտարից 29,1 ցենտներ հումք ստացան, իսկ Էջմիածնի աշխատավորները՝ 27,8 ցենտներ[12]։ Էջմիածնի Շահումյան գյուղում մեկ հեկտարի միջին բերքատվությունը կազմեց 46,4 ցենտներ։

Շաքարի ճակնդեղի բերքատվությունը 1953 թվականի մեկ հեկտարից 164 ցենտներից 1958 թ. հասավ 248 ցենտների։ Սպիտակի Սարահարթ գյուղում ստացվեց 410 ցենտներ միջին բերք, Ախուրյանի Ախուրիկ գյուղում՝ 362 ցենտներ և այլն։ Ծխախոտի բերքատվությունը 1953—1958 թթ. ընթացքում աճեց 3,6 ցենտներով, հասնելով 12 ցենտների, իսկ առանձին շրջաններում, օրինակ՝ Իջևանում, Վեդիում բերքատվությունը հասավ 15 ցենտների։ Ռեկոր-

---

9 «Сельское хозяйство Арм. ССР», стат. сборник, Ереван, 1961, стр. 15—16.

10 Նույն տեղում, էջ 281, 302։

11 Նույն տեղում, էջ 248։

12 Նույն տեղում, էջ 291։

դային բերք ստացան Շամշադինի ծխախոտագործները, ապահովելով հեկտարից 18,6 ցենտներ միջին բերք[13]։

Գյուղատնտեսության զարգացման նոր էտապում, շնորհիվ մթերումների ու գնումների գների կարգավորման, միանգամայն նոր վերաբերմունք առաջացավ այգեգործության նկատմամբ։ Ետպատերազմյան շրջանում խիստ դանդաղ են աճել ռեսպուբլիկայի պտղատու և խաղողի այգիները։ 1953—1958 թթ. ժամանակաշրջանում պտղատու այգիների տարածությունը ավելացել է ընդամենը 1,5 հազար հեկտարով, հասնելով 22,9 հազար հեկտարի։ Բայց նախորդ շրջանում այգիների մշակումն ու խնամքը այնքան բարձիթող վիճակումն է եղել, որ 1958 թ. պտղատու էր միայն 11,1 հազար հեկտարը, որը վկայում է միաժամանակ, որ այգիների մեծ մասը նոր էր հիմնադրված։ Նույն վիճակի մեջ էր նաև խաղողագործությունը. 1953 թ. 18,1 հազար հեկտարի փոխարեն 1958 թ. կար 24,5 հազար հեկտար այգի, որից սակայն բերքատու էր միայն 15,9 հազար հեկտարը։ Այլ կերպ ասած, միայն մեկ հնգամյակի ընթացքում խաղողի այգիների տարածությունն ավելացել էր մոտ $^1/_3$-ով[14]։

Եթե դանդաղ էր աճում այգիների տարածությունը, ապա զգալի արագ աճեց նրանց բերքատվությունը։ Լավ խնամքի ու մշակման շնորհիվ 1953—1958 թվականներին պտուղների բերքատվությունը մեկ հեկտարից 25,2 ցենտներից աճեց և հասավ 30,6 ցենտների, խաղողի բերքատվությունը՝ 42 ցենտներից՝ 51 ցենտների։ Պտղատու այգիներից 1958 թ. բարձր բերք ստացան Հոկտեմբերյանում՝ մեկ հեկտարից 69 ցենտներ, Նոյեմբերյանում՝ 55 ցենտներ, Արտաշատում՝ 32 ցենտներ։ Խաղողի բարձր բերք հավաքվեց Մեղրիում՝ 108,3 ցենտներ, Շամշադինում՝ 76,1 ցենտներ, Շահումյանում՝ 62,2 ցենտներ, Հոկտեմբերյանում՝ 62,4 ցենտներ։ Առանձին առաջավոր բրիգադներ և օղակներ հեկտարից ստացան 200 և ավելի ցենտներ խաղողի բերք։

ՍՄԿՊ Սեպտեմբերյան պլենումից հետո հատուկ ուշադրություն դարձվեց անասնաբուծության վրա, որը գյուղատնտեսության առավել ետ մնացող և բարձիթող բնագավառն էր։ Շնորհիվ ձեռնարկած միջոցառումների, զգալիորեն ավելացավ անասունների թե՛ գլխաքանակը և թե՛ մթերատվությունը։ Միայն խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1953—58 թթ. ավելացավ 100 հազար գլխով, ոչխարների և այծերի գլխաքանակը՝ կես միլիոնով[15]։

100 հեկտար հողատարածության հաշվով, 1959 թ. հունվարի տվյալներով, Հայկական ՍՍՌ-ում ընկնում էր 47 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, իսկ ՍՍՌՄ-ում՝ միջինը 14 գլուխ։ Հայաստանը Միության մեջ բռնում է երկրորդ տեղը՝ Վրացական ՍՍՌ-ից հետո[16]։

Անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման գործում խոշոր նվաճումների հասան Շահումյանի, Կալինինոյի, Արտաշատի, Ստեփանավանի շրջանները։ Եթե ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում 1953—58 թվականներին մեկ ֆուրաժային կովի կաթնատվությունը 921 կիլոգրամից հասավ 1414 կիլոգրամի, ապա Հոկտեմբերյանում համապատասխանաբար աճեց և 825 կիլոգրամից հասավ 1852 կիլոգրամի, Էջմիածնում՝ 859-ից 1887 կիլո-

---

13 Նույն տեղում, էջ 292։

14 Նույն տեղում, էջ 326—328։

15 Նույն տեղում, էջ 348—349։

16 «Народное хозяйство СССР в 1958 г.», М., 1959, стр. 458.

գրամի, Վեդիում՝ 848-ից 1497 կիլոգրամի, Կալինինոյում՝ 1336-ից 2347 կիլոգրամի[17]։

Եթե 100 հեկտար հողատարածության դիմաց ՍՍՌՄ-ում 1958 թ. արտադրվել է 118 ցենտներ կաթ, ապա Հայկական ՍՍՌ-ում արտադրվել է 233 ցենտներ, այսինքն կրկնակի անգամ ավելի[18]։

Այդ նույն ժամանակաշրջանում ռեսպուբլիկայում մսի արտադրությունը ավելացել է 1,3 անգամ։ 100 հեկտար հողատարածության դիմաց արտադրվել է 46 ցենտներ (կենդանի քաշով) միս՝ 1953 թ. 31 ցենտների դիմաց։ Հայկական ՍՍՌ-ն միութենական միջին մակարդակը գերազանցում է նաև մսի արտադրությամբ։ Եթե 1953—58 թվականներին ՍՍՌՄ-ում միջինը 100 հեկտար հողատարածության դիմաց մսի և ճարպի արտադրությունը 12 ցենտներից աճել է մինչև 15 ցենտների, ապա Հայկական ՍՍՌ-ում 17 ցենտներից հասել է 27 ցենտների[19]։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության աննախընթաց վերելքի մասին է վկայում այն փաստը, որ գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքի արժեքը 1956 թ. անփոփոխ գներով 1940 թվականի 130 միլիոն ռուբլուց, 1953 թ. հասավ 178 միլիոն ռուբլու, իսկ 1954—1958 թթ. ընթացքում այն կազմեց 237 միլիոն ռուբլի։ Այլ կերպ ասած, եթե նախորդ 13 տարիների ընթացքում համախառն արտադրանքի արժեքը աճել է 48 միլիոն ռուբլով, ապա նոր էտապի հինգ տարիների ընթացքում՝ 55 միլիոն ռուբլով։ Գյուղատնտեսության լավագույն աշխատանքի արտահայտությունն է այն փաստը, որ չնայած 1953—1958 թթ. ռեսպուբլիկայի ցանքատարածությունները, ինչպես նշվեց, կրճատվել են $^1/_5$-ով, ապա այդ նույն ժամանակաշրջանում դաշտավարությունից ստացվող համախառն արտադրանքի արժեքը 114,8 միլիոն ռուբլուց աճեց և կազմեց 136,5 միլիոն ռուբլի[20]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 1953—58 թթ. ՍՄԿՊ իմաստուն քաղաքականության շնորհիվ մեր երկրի գյուղատնտեսության մեջ զգալի տեղաշարժ է տեղի ունեցել։ Ձեռք բերած հաջողությունների շնորհիվ ռեալ հիմքեր են ստեղծվել գյուղատնտեսության հետագա զարգացման համար։ Ինչ խոսք, որ այդ հաջողությունները դեռևս չեն բավարարում մեր երկրի հարաճուն պահանջները և նվաճումների այն իդեալական մակարդակը չեն, որին ձգտում է սովետական ժողովուրդը։ Դա վերելք է միայն նախորդ շրջանի հետ մնալու ֆոնի վրա, երբ երկրում գյուղատնտեսության արտադրանքը դեռևս մնում էր նախասովետական մակարդակի վրա։

Գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման համար համաժողովրդական պայքարի շնորհիվ, Սեպտեմբերյան պլենումից հետո ձեռք բերած հաջողությունները մեկ անգամ ևս ցույց տվեցին սոցիալիստական գյուղատնտեսության անսպառ հնարավորությունները և նրա առավելությունները ինչպես մանր գյուղացիական տնտեսության արտադրության, այնպես էլ կապիտալիստական խոշոր արտադրության նկատմամբ։

1953 թ. հետո մեր երկրի գյուղատնտեսության վերելքի էությունը չի սահմանափակվում միայն նյութական բարիքների արտադրության ավելաց-

---

17 «Сельское хозяйство Арм. ССР», стр. 437.

18 «Народное хозяйство СССР в 1958 г.», стр. 478.

19 Նույն տեղում, էջ 477։

20 «Сельское хозяйство Арм. ССР», стр. 12.

մամբ։ Կոմունիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում առավել մեծ է այդ վերելքի նշանակությունը սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցման և գյուղի հասարակական հարաբերությունների զարգացման հարցերում, որն ի մի բերվեց և հանգամանորեն ամփոփվեց ՍՄԿՊ XXII համագումարի կողմից հաստատված պարտիայի նոր Ծրագրի մեջ։

ՍՄԿՊ ղեկավարությամբ գյուղատնտեսության զարգացման նոր էտապում, սոցիալիստական գյուղի աշխատավորների ձեռք բերած նվաճումները նախադրյալներ ստեղծեցին քաղաքի և գյուղի միջև եղած տարբերությունները ավելի արագ տեմպերով վերացնելու համար։

Հայտնի է, որ գյուղատնտեսությունը մեր երկրում զարգանում է սոցիալիստական սեփականության երկու ձևերի բազայի վրա՝ համաժողովրդական-պետական (սովխոզներ) և կոոպերատիվ-կոլտնտեսային (կոլտնտեսություն)։ Գյուղատնտեսության ղեկավարման սխալների և մեր երկրում սոցիալիզմի կառուցման դժվարությունների հետևանքով տարիներ շարունակ շատ կոլտնտեսություններ, արտադրական ցածր մակարդակի վրա գտնվելով, չէին կարողանում բավարարել կոլտնտեսականների պահանջմունքները։ ՀԿՊ XVII համագումարում (1954 թ.) բազմաթիվ փաստեր բերվեցին, որ ռեսպուբլիկայում, հատկապես լեռնային շրջաններում, տարիներ շարունակ աշխօրերին դրամ չէր բաշխվել։ Դա բացասաբար էր ազդում գյուղացիության թե՛ աշխատանքային կարգապահության և թե՛ հոգեբանության վրա։ Տվյալ պայմաններում ղեկավարության սխալները վերագրելով կոլտնտեսային սիստեմին, շատ տնտեսագետներ առաջարկում էին կոլտնտեսությունների արհեստական սովխոզացման միջոցով լուծել սոցիալիստական սեփականության երկու ձևերի տարբերությունների վերացման հարցը։ Պարտիան ժամանակին դատապարտեց այդ սխալ և վնասակար տեսակետը, ցույց տալով, որ դրանով ոչ թե վերացվում են սեփականության տարբերությունները, այլ փաստորեն իրար են հակադրվում սոցիալիստական սեփականության երկու ձևերը։

Մեր երկրում սովխոզային շինարարության պատմությունը ցույց է տալիս, որ պարտիայի ագրարային քաղաքականության մեջ սովխոզները կրկնակի դեր են կատարել. նախ հանդիսացել են որպես գյուղատնտեսական մթերքների արտադրության լրացուցիչ աղբյուր և երկրորդ՝ որպես գյուղատնտեսական արտադրության կազմակերպման օրինակելի ձև։ 1920-ական թվականներին սովխոզների մասսայական կազմակերպումը, որը, որպես կանոն, տեղի էր ունենում խոշոր կալվածատիրական տնտեսությունների ազդայնացման բազայի վրա, հանդիսանում էր կուլակության դեմ դասակարգային պայքարի ձևերից մեկը և հնարավորություն էր տալիս պետությանը հացահատիկային անհրաժեշտ կուտակումներ կատարելու։ Միանդամայն այլ նշանակություն ուներ սովխոզների մասսայական կազմակերպումը գյուղատնտեսության զարգացման նոր էտապում՝ 1954—1958 թթ.։ Քանի որ այն հիմնականում տեղի էր ունենում նոր յուրացվող հողերում կամ թույլ զարգացած կոլտնտեսությունների բազայի վրա, ուր խոշոր կապիտալ ներդրումներ են պահանջվում օրինակելի տնտեսություն դարձնելու համար, ապա այն պետք է դիտել որպես պետության կողմից գյուղատնտեսությանը օգնություն ցույց տալու նոր, կարևոր ուղի։ Միայն Հայաստանում 1953—58 թթ. 99 թույլ զարգացած կոլտնտեսությունների բազայի վրա կազմակերպվել են 34 սովխոզ, իսկ 21 կոլտնտե-

սություններ միացվել են եղած սովխոզներին, կամ վերակառուցվել արդյունաբերական ձեռնարկություններին առընթեր օժանդակ տնտեսություններին։ Դրանք պետությունից հսկայական նյութական միջոցներ պահանջող միջոցառումներ էին, որոնք նպաստեցին գյուղատնտեսության վերելքին։ Ինչ խոսք, որ դա չի նշանակում, թե գյուղատնտեսական արտադրության ավելացման հիմնական ուղին թույլ կոլտնտեսությունների սովխոզացումն է։ Դա պետական օժանդակության ավելացման ձևերից մեկն է։

Իսկ կոլտնտեսային կարգերը առաջացել են Վ. Ի. Լենինի կողմից մշակված կոոպերատիվ պլանի կենսագործման շնորհիվ, որը հնարավորություն տվեց վերադաստիարակելու մանր սեփականատեր գյուղացիությանը և նրան դարձնելու կոմունիստական հասարակարգի ակտիվ կառուցող։

Համաժողովրդական-պետական և կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության ընդհանրությունն այն բանի մեջ է, որ երկուսն էլ սոցիալիստական սեփականության տարբեր ձևեր են, որոնց վրա հիմնված արտադրության նպատակը ժողովրդի պահանջների բավարարումն է և որոնք բացառում են մարդու շահագործումը մարդու կողմից։ Սա բանվորա-գյուղացիական դաշինքի այն անխախտ հիմքն է, որով բնորոշվում է սոցիալիստական հասարակարգը։ Բայց սոցիալիստական սեփականության այս երկու ձևերի միջև կան նաև էական տարբերություններ, որոնք արտահայտվում են ամենից առաջ սեփականության հանրայնացման աստիճանի մեջ։ Եթե համաժողովրդական սեփականությունը պատկանում է ամբողջ ժողովրդին, այդ թվում նաև գյուղացիությանը, ապա կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականությունը պատկանում է միայն տվյալ տնտեսության անդամներին։ Մյուս կողմից, համաժողովրդական սեփականության մեջ հանրայնացված են արտադրության բոլոր միջոցները, իսկ կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության պայմաններում՝ ոչ բոլորը։ Այստեղ արդեն ուրույն նշանակություն է ստանում գյուղացիների օժանդակ տնտեսությունը, որը խոշոր դեր է խաղացել անձնական և հասարակական շահերի ճիշտ զուգորդման խնդրում։ Օժանդակ տնտեսությունների առաջացումը մեր երկրում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. 1) նոր կազմակերպված կոլտնտեսությունները ի վիճակի չէին բավարարելու իրենց անդամների պահանջները, 2) դեռևս շատ ուժեղ էր գյուղացու մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը՝ սեփականես ունենալու նրա դարավոր ձգտումը։ Օժանդակ տնտեսության գոյությունը, ինչպես տեսնում ենք, հիմնականում կախված է հանրային տնտեսության մակարդակից։ Գյուղատնտեսության զարգացման ետսեպտեմբերյան շրջանում օժանդակ տնտեսության դերը գնալով նվազում է, որն ի վերջո կհասցնի նրա տնտեսական նշանակության վերացմանը։ «Որոշակի էտապում,—գրված է ՍՄԿՊ Ծրագրում,—կոլտնտեսությունների հանրային տնտեսությունը կհասնի զարգացման այնպիսի մակարդակի, երբ հնարավոր կդառնա նրա ռեսուրսների հաշվին լիովին բավարարելու կոլտնտեսականների պահանջմունքները։ Այդ պայմաններում անձնական, օժանդակ տնտեսությունը աստիճանաբար տնտեսապես կկորցնի իր նշանակությունը»[21]։

Այսպիսով, կոմունիստական արտադրաեղանակի ձևավորման արդի էտապում մեր երկրում գոյություն ունի սեփականության երկու ձև՝ համաժողովրդ-

---

21 ՍՄԿՊ Ծրագիր, Երևան, 1961, էջ 100։

դական-պետական և կոոպերատիվ-կոլտնտեսային, որոնց վրա էլ խարսխվում են դասակարգային հարաբերությունները։ Բացի դրանից կոլտնտեսային գյուղացիությունն ունի նաև օժանդակ տնտեսություն, որը նրա անձնական սեփականությունն է։

Բանվոր դասակարգը, կապված լինելով համաժողովրդական սեփականության հետ, հասարակության մեջ առաջատար և ղեկավար դեր է կատարում, արտահայտելով ամբողջ ժողովրդի շահերը։ Գյուղացիությունը, որը կապված է համաժողովրդական սեփականության հետ, որպես հասարակության լիարժեք անդամ, պաշտպանում է համաժողովրդական շահերը։ Իսկ որքանով կապված է կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության հետ արտահայտում է պաշտպանում է տվյալ կոլեկտիվի շահերը, որոնք հիմնականում համընկնում են համաժողովրդական շահերի հետ։ Այլ է վիճակը օժանդակ տնտեսության խնդրում, որը նրա անձնական սեփականությունն է։ Այստեղ բացառված չեն շահերի որոշ հակասություններ, հատկապես տնտեսապես թույլ կոլտնտեսություններում։ Դա արտահայտվում է հիմնականում օժանդակ տնտեսությունների ուռճացման, որոշ կոլտնտեսականների հանրօգուտ աշխատանքից խուսափելու, կոլտնտեսային շուկաներում մթերքների գները բարձրացնելու մեջ և այլն։

Ինչպես տեսնում ենք, սոցիալական հարաբերություններն ու դասակարգային տարբերությունները բխում են սեփականության նկատմամբ եղած վերաբերմունքից և նրա ձևերից։ Այդ է պատճառը, որ ՍՄԿՊ-ն, ելնելով մեր երկրում կոմունիստական հասարակարգի կառուցման շահերից, դասակարգային տարբերությունները վերացնելու նպատակով, բոլոր ջանքերն ուղղում է արտադրական ուժերի զարգացման միջոցով սեփականության տարբեր ձևերը վերացնելու և մեկ միասնական կոմունիստական սեփականության մեջ ձուլելու վրա։ Այդ նպատակին հասնելու համար նախ անհրաժեշտ է կոլտնտեսային սեփականությունը բարձրացնել համաժողովրդական սեփականության աստիճանին։ ՍՄԿՊ Սեպտեմբերյան և հետագա պլենումների բազմաթիվ որոշումներով ու միջոցառումներով պարտիան նոր էտապում հիմնական ուշադրությունը բևեռելով և միջոցները մոբիլիզացնելով կոլտնտեսային արտադրության բարձրացման համար, դրանով իսկ պայքարում է մեր երկրում սեփականության երկու ձևերի տարբերությունների, հետևաբար և դասակարգային տարբերությունների վերացման համար։

Կոոպերատիվ-կոլտնտեսային և համաժողովրդական սեփականությունների փոխհարաբերություններում խառնաշփոթ, սխալ տեսակետների խիստ քննադատությունը, որը կատարվեց ՍՄԿՊ XXI և XXII համագումարներում ելնելով 1953—58 թթ. մեր երկրի էկոնոմիկայում կատարված արմատական տեղաշարժերից, ոչ միայն պրակտիկ, այլև խոշոր թեորիական ներդրում էր կոմունիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում։

Ամփոփելով արդյունաբերության և հատկապես գյուղատնտեսության ետսեպտեմբերյան շրջանի նվաճումները, պարտիան չբավարարվեց սխալների քննադատությամբ, այլ ցույց տվեց այն ռեալ միջոցները, այն ուղիները, որոնց շնորհիվ կոմունիստական շինարարությանը զուգընթաց կվերանան սեփականության ձևերի տարբերությունները և նրանց վրա հիմնված դասակարգային տարբերությունները մեր երկրում։ Պարտիան ցույց տվեց այն ծիլերը,

որոնց աճումն ու զարգացումը տանում են դեպի մեկ միասնական կոմունիստական սեփականություն։ Համառոտակի խոսենք այդ ծիլերի մասին։

Միանգամայն պարզ է, որ որքան արագ զարգանան գյուղատնտեսության արտադրողական ուժերը, այնքան ավելի կկատարելագործվեն սոցիալիստական արտադրահարաբերությունները գյուղում և այնքան ավելի կարագանա սոցիալիստական սեփականության երկու ձևերի տարբերությունների վերացումը։ Այդ խնդրում անգնահատելի դեր են խաղում կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը։

Կոլտնտեսային կարգերի զարգացմանն ու ամրապնդմանը զուգընթաց, տարեցտարի աճում են անբաժանելի ֆոնդերը և փոխվում է նրանց որակը։ Դրանք կոլտնտեսային արտադրության այն յուրահատուկ կատեգորիաներն են, որոնց մեջ արտահայտվում են կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության առաջացման ու զարգացման առանձնահատկությունները։ Անբաժանելի ֆոնդերի մեջ մտնում են տվյալ կոլտնտեսության բոլոր մեքենաները, բանող և մթերատու անասունները, կուլտուր-կենցաղային և արտադրական շինությունները և այլն։ Դրանք կոլտնտեսային սեփականության այն մասն են, որոնք ոչ մի դեպքում չեն բաշխվում նրա անդամների միջև։ Անբաժանելի ֆոնդերը կոլտնտեսային արտադրության ավելացման և կուլտուր-կենցաղային մակարդակի բարձրացման հորդառատ աղբյուր են։ Կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը բուռն աճ ունեցան, հատկապես, ՍՄԿՊ Սեպտեմբերյան պլենումից հետո, երբ կոնկրետ միջոցառումների շնորհիվ բարձրացավ գյուղատնտեսության արտադրության մակարդակը։ Եթե 1948—53 թթ. հնգամյակի ընթացքում ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների դրամական եկամուտների տարեկան միջին աճը 61 միլիոն ռուբլի էր, իսկ անբաժանելի ֆոնդերի աճը 21 միլիոն ռուբլի, ապա 1953—58 թվականների դրամական եկամուտների տարեկան միջին աճը կազմեց 142 միլիոն ռուբլի, իսկ անբաժանելի ֆոնդերինը՝ 88 միլիոն ռուբլի։ Այսինքն՝ համախառն դրամական եկամուտների տարեկան միջին աճը ավելացավ երկու անգամ, իսկ անբաժանելի ֆոնդերի աճը՝ 4 անգամ։ Եթե 1953 թ. կոլտնտեսությունների հիմնական ֆոնդերը Հայաստանում 100 տոկոս ընդունենք, ապա 1958 թ. այն հասավ 174 տոկոսի, իսկ 1959 թ. կրկնապատկվեց[22]։

1953—58 թթ. ընթացքում կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը քանակական աճից բացի, արմատական՝ որակական փոփոխությունների ենթարկվեցին։ Փոխվեց նրանց կառուցվածքը, որն ավելի շուտ կախված է հասարակական-արտադրողական ուժերի զարգացման մակարդակից, քան թե տվյալ կոլտնտեսության հնարավորություններից։ Այժմ կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը կազմված են ժամանակակից գյուղատնտեսական մեքենաներից, որը նրանց վաճառվեց ՄՏԿ-ների վերակառուցման շնորհիվ, բարձր մթերատու, ցեղական անասուններից, արտադրական և կուլտուր-կենցաղային կապիտալ շինություններից, էլեկտրակայաններից, բարձրորակ այգիներից և այլն։ Անբաժանելի ֆոնդերն իրենց էությամբ համարյա չեն տարբերվում պետական սեկտորի՝ օրինակ սովխոզների արտադրական ֆոնդերից։ «Կոլտնտեսությունների էկոնոմիկայի զարգացման պրոցեսը,—ասել է Ն. Ս. Խրուշչովը 1958 թ.,—այնպես է գնում, որ անբաժանելի ֆոնդերը անընդհատ

[22] «Сельское хозяйство Арм. ССР», стр. 9

աճում են և փոփոխվում որակապես, իրենց կառուցվածքով և իրենց հասարակական բնույթով ավելի մերձենում համաժողովրդական արտադրական ֆոնդերին»[23]։

Գյուղատնտեսության զարգացման նոր էտապի առանձնահատուկ կողմն այն է, որ անբաժանելի ֆոնդերի մեջ գնալով ավելանում է մեքենաների տեսակարար կշիռը, որը կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսական և արդյունաբերական աշխատանքների բնույթի միջև եղած տարբերությունների վերացման խնդրում։ Մյուս կողմից՝ մեքենական բազայի վրա անբաժանելի ֆոնդերի հետագա ընդլայնումը դրականապես է ազդում կոլտնտեսականների հոգեբանության վրա, ավելի ու ավելի ազատագրելով նրանց մանր սեփականատիրական ձգտումներից։ Նոր էտապի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ անբաժանելի ֆոնդերը տվյալ կոլտնտեսության սեփականությունը լինելով հանդերձ, եկամուտների ավելի ու ավելի մեծ մասն է ծախսվում համաժողովրդական կարիքների վրա։ Փաստորեն հակասություն է ստեղծվում նրանց իրավական սեփականատիրության և օգտագործման բնույթի միջև, որն իր զարգացման ընթացքում, անշուշտ, կլուծվի անբաժանելի ֆոնդերի հետագա աճման և համաժողովրդական սեփականության հետ միաձուլման միջոցով։

Այսպիսով, կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի դերի բնորոշումը և նրանց արագ աճը ետսեպտեմբերյան շրջանում կարևոր ներդրում է սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցման և մեր երկրում դասակարգային տարբերությունների վերացման խնդրում։

Կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության աստիճանի բարձրացնելու համար մղվող պայքարում անբաժանելի ֆոնդերից բացի խոշոր նշանակություն ունեցավ պարտիայի կողմից ձեռնարկված կոլտնտեսությունների խոշորացման կուրսը։ 1950—60 թթ. ընթացքում ՍՍՌՄ-ում եղած 252 հազար կոլտնտեսություններ միավորվեցին 50 հազար խոշորացված կոլտնտեսությունների մեջ (կրճատվեց 5 անգամ)։ Բայց մեր ռեսպուբլիկայում կոլտնտեսությունների խոշորացումը չնպաստեց գյուղատնտեսության զարգացմանը, կոլտնտեսային արտադրության բարձրացմանը։ Հարցն այն է, որ մեզ մոտ կոլտնտեսությունների խոշորացման պարտիայի իմաստուն քաղաքականությունը վերածվեց կամպանիայի և առանց տեղական առանձնահատկություններն ու աշխատավորների ցանկությունները հաշվի առնելու, մի քանի ամիսների ընթացքում, կոլտնտեսությունները միացվեցին միմյանց և 1940 թ. 1030 կոլտնտեսություններր 1953 թ. դարձվեցին 626 «խոշոր» տնտեսություններ։ Կոլտնտեսությունների խոշորացման սխալների և պարտիայի քաղաքականության խեղաթյուրումների հետևանքով 1950—1953 թթ. զգալի չափով նվազեց գյուղատնտեսական մթերքների արտադրության մակարդակը և անասունների գլխաքանակը։

1953 թ., երբ դատապարտվեց անհատի պաշտամունքը, բողոքների մասսայական տարափի ճնշման տակ մեր ռեսպուբլիկայում արհեստականորեն միավորված կոլտնտեսությունները նորից ապախոշորացվեցին։ Դրա հետևանքով մեկ կոլտնտեսությանն ընկնող ընտանիքների թվով և հողատարածությունների չափով Հայկական ՍՍՌ-ն Միության մեջ վերջին տեղերից մեկն

---

23 Хрущев Н. С., «О дальнейшем развитии колхозного строя и реорганизации МТС», М., 1958, стр. 36.

ընկավ։ Այսպես, 1960 թ. ՍՍՌՄ-ում մինչև 200 տնտեսություն ունեցող կոլտնտեսությունների թիվը կազմում էր ամբողջի 35,4 տոկոսը, իսկ մեր հանրապետությունում այն հասնում է 66,8 տոկոսի. կամ մինչև 500 հեկտար վարելահող ունեցող կոլտնտեսությունների թիվը ՍՍՌՄ-ում ընդհանուրի 13,6 տոկոսն էր կազմում, իսկ մեզ մոտ՝ 67,9 տոկոսը[24]։

Հատկապես մանր կոլտնտեսություններ շատ կան Ղափանի, Ղուկասյանի, Ապարանի, Ամասիայի շրջաններում։ Ղափանի շրջանի 41 կոլտնտեսություններից 33-ում միջինը 50-ական տնտեսություն է ընկնում, Ղուկասյանում՝ 24 կոլտնտեսություններից 20-ին՝ 58-ական տնտեսություն, Ապարանում՝ 35-ից 18-ին՝ 65-ական տնտեսություն և այլն։ Տվյալ պայմաններում հնարավոր չէ գյուղատնտեսական կուլտուրաների ճիշտ տեղաբաշխում և մասնագիտացում կատարել, կրճատել ավելորդ հաստիքներն ու ավելորդ ծախսերը։ Ապացուցելու հարկ չկա, որ նման գաճաճ տնտեսությունները վիճակի չեն նաև մեքենայական հարուստ պարկ ստեղծել և եղած ռեզերվները լիովին օգտագործել։ Դրանք բացասաբար են ազդում ինչպես արտադրության բարձրացման, այնպես էլ գյուղի աշխատավորության կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման վրա։ Հետևաբար կոլտնտեսությունների խոշորացման կուրսը ձախողելուց հետո ոչ թե պետք է հրաժարվել նրանից, այլ ավելի հետևողականորեն, լայն բացատրական աշխատանքներ ծավալելու միջոցով պայմաններ ստեղծել այդ սակավ արդյունավետ տնտեսությունները միավորման միջոցով խոշորացնելու համար։ Հատկապես ՍՄԿՊ ԿԿ 1962 թ. Մարտյան պլենումից հետո այդ ավելի հրամայական անհրաժեշտություն է դարձել։

Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման նոր էտապում գյուղի նյութա-տեխնիկական բազայի ամրապնդման և գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման բազայի վրա առաջացան միջկոլտնտեսային խորհուրդները, որոնք կարևոր նվաճում են կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության աստիճանին բարձրացնելու խնդրում։ Միջկոլտնտեսային կապերի առաջացումը առանձին կոլտնտեսությունների նեղ շրջանակների և արտադրողական ուժերի բուռն վերելքի հակադրության ծնունդն էր, որը լայն շինարարական գործունեություն ծավալելով գյուղատնտեսության զարգացման ներկա էտապում, հաջողությամբ նպաստում է արտադրության վերելքիս։

Շահումյանի միջկոլտնտեսային խորհրդի մեջ ընդգրկված են շրջանի բոլոր կոլտնտեսությունները, որոնց դրամական եկամուտների 2,5 տոկոսը կենտրոնանում է խորհրդի գանձարանում։ Հետաքրքրականն այն է, որ խորհուրդն ունի իր բազան՝ քարհանքը, հյուսնոցը, սղոցարանը, բեռնատար մեքենաները, բանվորները և այլն։

Այսպիսով, ՍՄԿՊ ԿԿ Սեպտեմբերյան պլենումից հետո մեր ամբողջ ժողովրդի անխոնջ աշխատանքի շնորհիվ ձեռք բերած հաջողությունների հիման վրա, խոշոր քայլ կատարվեց գյուղի և քաղաքի միջև եղած սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային տարբերությունները վերացնելու, կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության աստիճանի բարձրացնելու միջոցով՝ մեկ միասնական կոմունիստական սեփականության մեջ միաձուլելու ուղղությամբ։ Դա խոշոր նվաճում է կոմունիզմի համար մղվող պայքարում։

---

[24] «Сельское хозяйство СССР», М., 1960, стр. 54—55.